

առաջին տողը պիտի ակսպէս կար-  
դալ՝ «Քովերը» մօր հետ ծածկած քողե-  
րով), —

որովհետև «քողերով» բառի ոտը  
(լանգ) «աղօթքներով» է, բայց  
«ծածկած» բառին ոչ առաջիկաչ, ոչ  
էլ լիտազաւ ստրոֆայում ոտ կաչ

Նթէ այդ մի քանի, ըստ երեսւ-  
թին թեժե, չափաբերութեան դէմ  
մեղանչող, պակասութիւնները և մի  
քանի սխալները կետադրութեան

վերաբերեալ հեռացցին պոէմակի  
թարգմանութիւնից, այն ժամանակ  
հայը ազատ կարող է ասել թէ ոչ  
մի ազգ չունի թարգմանած «Դև» ը  
անպէս ճիշտ, անպէս գեղեցիկ, ինչ-  
պէս իւր գրականութիւնը.

Մեծ արդիւնք կը լինէր եթէ նո-  
րից հրատարակէր այդ պոէման,

Յովհաննէս Գնուանէ

1894 թ. լունաբը, Մոսկաւ,

ԲՐՅՄՅ Ա. - „Հիշն животныхъ“, въ десяти томахъ, переводъ съ З-го  
нѣмецкаго изданія подъ редакціею магистра зоологіи К. Сентъ-Илера.

քառաձալ, Պետերբուրգ, 1893—1894 թ.

ԲՐԵՄ, Ալֆրէդ.—«Կենդանիների կեանքը»: Թարգմանեց ռուսերէն  
գերմանական երրորդ տպագրութիւնից կենդանաբանութեան մա-  
գիստրոս Կ. Սէնտ-Իլէր: Տասը հատոր: Գինն է 60 ռուբլի:

Ոռուսաց գրականութիւնը վերջին  
ժամանակները հարստացաւ մի վե-  
րին աստիճանի նշանաւոր գրւած-  
քով, թարգմանաբար սկսեց դուրս  
գալ լաւանի գերմանացի գիտնական  
Ալֆրէդ Բրէմի «Կենդանիների կեան-  
քը» հոչակառը գրւածքը:

Մինչև վերջին ժամանակներս կեն-  
դանաբանները ամենեին ուշադրու-  
թիւն չէին դարձնում կենդանիների  
ներքին, հոգեկան կեանքի վրայ,  
Գիտնականներին համարեա բացա-  
ռապէս հետաքրքրում էր միմիան  
կենդանիների մարմնի կազմւածքը և  
դրա զարգացումը: Գրւում էին և  
հիմա էլ գրւում են ահագին հատոր-  
ներ մի որ և է որդնի կամ միջատի

մասին, և այդ ահագին հատորները  
բաղկացած էին լինում ըստ մեծի  
մասին կենդանիների կազմւածքի ա-  
մեն մի մասի մանրամասն նկարա-  
գրութիւններով:

Միևնուն ժամանակ այդ ահագին  
հատորների մէջ համարեա ոչ մի էջ  
չէր նւիրուում նոյն կենդանիների սո-  
վորութիւններին, նիստ ու կացին...  
Այդ ուղղութիւնը ավեմ էլ դեռ  
նկատում է համալսարաններում,  
ուր ընդարձակ կերպով անցնում են  
կենդանաբանութիւնը, սակայն շա-  
բաթական մի ժամ էլ չի նւիրում  
կենդանիների կեանքին:

Այդ ուղղութեան դէմ սկսել են  
արդէն զանազան կողմերից բողոք-

ներ լավտնւել, ընդունելով, որ կենդանիների անսառոմիան սաստիկ կարևոր է, բողոքողները առաջարկում են լինել անգամ էլ միակողմանի այլ հետաքրքրւել նաև կենդանիների ներքին կեանքով:

Այս վերջին հոսանքը սաստկացաւ մանաւանդ Դարւինի ազդեցութեան տակ. երբ Դարւինը ապացուցեց, որ մարդը անչատւած չէ միւս կենդանիներից այլ կապւած է գրանցնեալ թէ կազմւածքի և թէ հոգեկան երեսթներ ով, այն ժամանակից լիտու գիտնականները սկսեցին մեծ եռանդով ուսումնասիրել կենդանիների սովորութիւնները, խելքը և միւս հոգեկան երեսթները:

Ալտեղից առաջացաւ կենդանիների համեմատական հոգեբանութիւնը, որի վրայ աչժմ մեծ լուսեր են դնուում:

Այդ ուղղութեան արտադրութիւններից մէկն է Ալֆրէդ Բրէմի «Կենդանիների կեանքը» գրւածքը:

Բրէմը առաջին անգամ չէ լուս տեսնում ուսաց լեզով, նրա գըրածքի թարգմանութիւնը մի անգամ արդէն կատարւած է եղել, սակայն այդ թարգմանութիւնը կորցրել է իւր թարմութիւնը, նոր թարգմանութիւնը անհամեմատ աւելի լիակատար ու հարուստ է քանի առաջանը:

Բրէմի «Կենդանիների կեանքը» պատկանում է մեծածաւալ հրատարակութիւնների թվին. Ուսուցիթարգմանութիւնը բաղկացած պիտի լինի տասը հատորից, կոչ են տեսնել արդէն չորս հատորներ. Ամեն մի հատորը պարունակում է իւր մէջ

մօտ 600—800 մեծագիր երեսներ բազմաթիւ գեղեցիկ նկարներով:

Իր գրւածքի մէջ Ալֆրէդ Բրէմը հաւաքել է ոչ միան ուրիշ գիտնականների արած դիտողութիւնները, այլ և իր սեպհական դիտողութիւնները, որ նա արել է իր ճանապարհորդութիւնների ժամանակի, իսկ ճանապարհորդել է նա սաստիկ շատ, եղել է Եւրոպակի բազմաթիւ անկիւններում, Սիբիրում, Ամերիկայում, Աֆրիկայում... Մանաւանդ նշանաւոր է նրա ճանապարհորդութիւնը Աֆրիկակի խորքերում, ուր նա ապրել է մի քանի տարի:

Իւր ճանապարհորդութիւնների ժամանակ Բրէմը չէր սիրում ապրել քաղաքներում, նա շուտով հեռանում էր անտառները, ուր ուշի ուշով ուսումնասիրում էր կենդանիներին գոցա կեանքի բնական պայմաններում: Բացի դրանից, նա աշխատում էր կենդանիներին կենդանի բռնելի որպէս զի տանը շարունակի ուսումնասիրել նրանց սովորութիւնները: Իսկ եթէ այդ չէր չաջողութ, նա հրացանի օգնութեամբ սպանում էր կենդանիներին և ժողովածուներ կազմում նրանցից:

Գանի քանի անգամ վտանգի է ենթարկել նրա կեանքը ճանապարհորդութեան ժամանակ վայրենի երկիրներում:

Այն ճանդամանքը, որ «Կենդանիների կեանքի» մէջ բերւած դիտութիւններից շատերը կատարւած են հեղինակի ձեռքով, աւելի ևս մեծացնում է նրա արժէքը:

Առաջին հատորի մէջ հեղինակը նկարագրում է կապիկներին, կիսա-

կապիկներին (ոռչօբեզյան), գիշատիչներին և չիխջերին.

Այդ կենդանիները բոլորն էլ կաթնասուններ են, Երկրորդ և երրորդ հատորներն էլ են նւիրած կաթնասուններին, այնպէս որ միմիայն կաթնասունների գասակարգին նւիրած են մօտ 2200 մեծաղիր երեսներ։ IV, V և VI հատորները պիտի նւիրածն թռչուններին, Հետեւալ հատորներում պէտք է նկարագրեն սողունները, երկակինցաղները և ձկները։

Այնպէս որ, նիւթի հարստութեամս տեսակէտից, Բրէմի «Ահնդանիների կեանքը» չունի իր նմանը եւրոպա-

կան գրականութեան մէջ։

Հարուստ նիւթին միանում է հեղինակի գրաւիչ պատմելու ձեւը։

Բացի բազմաթիւ հասարակ նկարներից, գրւածքում կան նաև մի քանի շքեղ խրոմոլիտոգրաֆիաներ։

Ափսոս միայն որ այդ հիմանալի գրւածքը քիչերը միայն կը կարողանան ձեռք բերել, որովհետեւ նրա գինը շատ բարձր է. ամբողջ հրատարակութիւնը կարժենակ մօտ 60 ռ.։

Ոճը պարզ ու հասարակ է, այնպէս որ գրւածքը հեշտ կարող են համարականալ նաև ոչ մասնագէտները։

Ս. Բ.

ՄՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ վարդապետի Հայոց պատմութիւնը. թարգմանեց Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանց։ Ալեքսանդրապոլ, տպարան Ա. Մ. Մալլսասեանի. 1893 թ. 233 էջ, ութածալ, գինն է 60 կուէկ։

Մեր գասական մատենագրութեան դարկ աւեց Խորենացու աշխարհաբարարը, որին չաչորդեց Եղիշէի երկրորդ թարգմանութիւնը և աւսօր էլ ահա լուս է տեսել Լաստիվերտցու թարգմանութիւնը։ Անտարակուա, ցանկալի է, որ մեր բոլոր գասական գըրածների թարգմանութիւնն ունենաւինք աշխարհիկ լեզով, բայց Կորինքը, Բիւզանդը, Փարավեյին, Աէրբէուը, Ասովիկը և ալյն թողած ձեռնամուկս լինել Լաստիվերտցու թարգմանութեան, մեզ օտարութի է թւում։ Թէն սա Ժ.Ա. դարու միակ պատմիչն է, բայց թէ իւր նշանակութիւնով և

թէ պատմական ոճով շատ երկրոգական տեղ է բռնում մեր հին գրականութեան մէջ, մանաւանդ նա աւելի մի ողբերգու վարդապետ է, քանիսկական պատմիչ, որ ամեն մի երեսիթ բացատրում է ժամանակակից։ Ների մեղքերի շատութեամբ և շարունակ ողբում է Հաճաստանի թըշւառութիւնը, անհամար, շատ անգամ անկապ և անտեղի վկանութիւններ մէջ բերելով Ա. Գր.քից, որին՝ ինչպէս իրեւում է, շատ է տեղեակ։

Գր.քի բովանդակութիւնից ամենահետաքրքրական կառուներն են Բագրատունեաց անկումը և Թոնդ-